ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆԻ «ՀԵՂՆԱՐ ԱՂԲՅՈՒՐ» ՎԻՊԱԿԸ

«Հեղնար աղբյուր» վիպակը Մ. Արմենը գրել է 1933-1935 թվականներին Երևանում: Ունեցել է մի քանի հրատարակություններ և զետեղվել «Երկեր»-ի ժողովածուի 2-րդ հատորի մեջ (1967): Ժամանակի ընթացքում գրողը խմբագրական միջամտություններ է կատարել: Որպես վերջնական տարբերակ ընդունում ենք «Երկեր»-ի ժողովածուի մեջ զետեղվածը:

Նախորդ հրատարակություններում կա ճոն՝ «Ամենասիրելի վարպետ Ավետիք Իսահակյանին», ինչը «Երկեր»-ում բացակայում է:

«Հեղնար աղբյուրի» ծնունդը 1930-ականների առաջին կեսին պատահական չէր և արդյունք է գրական մի շարժման, որի ակունքում Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպն էր: Հեռացող պատմական հայրենիքը դառնում էր գրականություն: Չարենցի օրինակով Գ. Մահարին գրեց իր «Մանկություն» (1929) և «Պատանեկություն» (1930), Վ. Թոթովենցը՝ «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» (1930-1933), Զ. Եսայանը՝ «Սիլիհտարի պարտեզները» (1935) ինքնակենսագրական վիպակները:

Նույն ստեղծագործական ուղղվածությունը ծնունդ տվեց նաև Արմենի «Հեղնար աղբյուր» և Ա. Բակունցի «Կյորես» (1936) վիպակներին: Նրանք, բարեբախտաբար, չէին կորցրել իրենց ծննդավայրերը, բայց կարողացան Գյումրին և Գորիսը կերպավորել իրական և առասպելական գծերով:

Առասպելի ծնունդն է ահա Արմենի վիպակը: Նոր գրականության պահանջներին ունկնդիր, որը տանում էր դեպի գաղափարական սահմանափակումներ, ի վերջո՝ սխեմատիզմ, գրողն այս վիպակը գրելիս զարմանալիորեն կարողացավ ոչ թե կերպարանափոխվել, այլ վերագտնել ինքը իրեն: Նա գնաց ոչ թե մերկապարանոց գաղափարների ետևից, այլ ոգեկոչեց իրական, կենսական կյանքը: Ուժ և խիզախում էր պահանջվում գրողից այսպիսի երկ ստեղծելու համար խիստ գաղափարականացված ժամանակներում: Մ. Արմենն ասես իրականացրեց Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի»-ի պատվիրաններից մեկը, ըստ որի՝ երգը ծնվում է ոչ թե ձայներից կամ բառերից, այլ՝ երկրից, հարազատ միջավայրից: Ընդ որում՝ Արմենն այն պատկերեց ոչ թե մասնակի ընդգրկումով, այլ՝ ամբողջական և համապարփակ: Այստեղ և՛ միջավայրն է, և՛ նյութն է, և՛ հերոսներն են, և՛ լեզուն է, և՛ խոսքի ներքին բարոյախոսությունը...

Մուտքի նախադասությունը շատ հանդիսավոր է ու տարողունակ. «Լենինականի հին թաղերից մեկում՝ Զորի Բողազում, որն ամենայն իրավամբ դեռ

կարող էր կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հռչակավոր վարպետ ուստա Մկրտիչը»[1]:

Անմիջապես աչքի առջև է կանգնում հին Գյումրին՝ իր Ձորի Բողազ թաղով՝ հուշելով, որ դեպքերը կատարվում են մեր ժամանակներում, քանի որ Ալեքսանդրապոլը Լենինական վերանվանվեց 1924-ին: Աչքի առջև է կանգնում նաև աղբյուրների վարպետ ուստա Մկրտչի ազդեցիկ կերպարը: Մեռնում էր մի մարդ, որի կյանքի պատմությունն էլ պիտի դառնար վիպակի բովանդակությունը:

Ավելի խորացնելու և տպավորիչ դարձնելու համար ընթերցողական հետաքրքրությունը՝ հեղինակը թանձրացնում է իր հերոսի կյանքի առեղծվածը: «Թեև նա վաթսունհինգ տարեկան էր, բայց ծերությունը չէր նրա մեռնելու պատճառը, որովհետև նա դեռ ամրակազմ էր և առողջ: ... Նա մեռնում էր, որովհետև հասել էր իր նպատակին, որովհետև վերջացրել էր իր հաշիվները աշխարհի հետ: Նա դրսում այլևս ոչինչ չուներ անելու»[2]:

Նա աշխատել էր քառասուն տարի, կառուցել էր քառասուն աղբյուր: Քառասուներորդ աղբյուրը կառուցելուց հետո մահկանացուն կնքելը եղել էր նրա ներքին որոշումը, այլ կերպ՝ երդումը: Ուստա Մկրտչի մահը գիտակցված մահ էր. «Եվ նա մեռնում էր հանդարտ, տխուր և խորհրդավոր մահով»[3]:

Հեղինակը տեղին օգտագործել է Գյումրվա բարբառը և, տեղական կոլորիտը պահպանելով՝ խոսեցրել իր հերոսներին:

«Վերջին պառկն է, ներող էղեք»[4], - ասում է ուստան, և ծայր է առնում զրույցը: Խոսում են կամուրջ կառուցող Ավետիքը, տուն կառուցող Կարոն, ջրհորներ փորող Աղասին, վարպետներ Բագրատը, Սարգիսը, Օնեսը, Գյումրիի իսկական մարդիկ:

Նրանց խոսքի նյութը կյանքն է ու մահը: «Աշխըրքի օրենքն է էդպես, Մկրտիչ, - ասում է Կարոն: - Բոլորի ախպուրն էլ մե օրըմ պիտի ցամքի: Հմը մարդ կա, օր իրան ետևեն հիշատակ ունի, մարդ կա, օր չունի: Քու ախպուրդ ցամքավ, հմը քառասուն հատ կա քու տեղակդ»[5]:

Իր կյանքի ցամաքած աղբյուրն ուստա Մկրտիչը նմանեցնում է Հեղնարի ցամաքած աղբյուրին: Բոլորի համար Հեղնարի անունը խորհուրդ ուներ, ինչն էլ նրանց միտքը տանում է տարիների խորքը, քսան տարի ետ:

Աստիճանական զարգացումով վիպակի նախադրությունը վերածվում է հանգույցի:

---

1 Մ. Արմեն, Երկեր, հ. 2, Ե., «Հայաստան», 1967, էջ 473:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում, էջ 477:
5 Նույն տեղում, էջ 476:

Հեղնար աղբյուրն այնքան արտասովոր էր, որ չէր մտնում ուստա Մկրտչի քառասուն աղբյուրների շարքի մեջ: Հեղնար աղբյուրի հրաշքը կատարվել էր մեկ անգամ և այլևս չէր կրկնվել: Հրաշքին ներկաներն այդ պահին մտածել են, թե դա գերբնական, աստվածային ուժն է: Բայց հիմա առասպելի վերածված հրաշքն ավելի է գրավում նրանց և խնդրում են ուստա Մկրտչին մահից առաջ բացահայտել այդ առեղծվածը: «Ախպուրը ձեռագործ է, հրաշքը՝ անձեռագործ», - ասում է ուստան այնքան բնական, որ ինքն էլ հավատում է իր իմացած հրաշքին. «Ես կրնամ պարզե մեննակ իմ ախպուրս, Ասպած էլ թող պարզե իրան հրաշքը՝ թե օր կամենա»[1]:

Ուստա Մկրտչի մահը օրերի հարց է, և այս ընթացքում նա պիտի բացահայտի մի գաղտնիք, և դա լինելու է Հեղնար աղբյուրի գաղտնիքը:

Նախ բացվում են ուստա Մկրտչի կյանքի էջերը: Քսանվեց տարեկանում, կառուցելով իր առաջին աղբյուրը, Մկրտիչը Գյումրու հռչակավոր վարպետների կողմից ստանում է ուստա կոչումը: Նա իր համար հարսնացու պիտի ընտրեր՝ ջրի եկող աղջիկներից առաջինին: Հեղնարը եկավ երրորդը: Բայց Մկրտիչը մորն ասում է, թե Հեղնարը ջրի եկած առաջին աղջիկն էր և հենց այդ պահից էլ սարսափում է Աստծու պատժից: Ահա այս պահի մեջ է ուստա Մկրտիչը տեսնում իր մեղքը, և երբ Հաջին ասում է, որ իր մեղքը աշխարհի չափ է, ուստան դրա մեջ նաև մեղքի իր բաժինն է տեսնում:

Հարսի՝ Մանանի հետ խոսելիս ուստան ասում է, որ նեղացած է որդուց, որը իր արհեստը իրենից սովորելու փոխարեն գնացել է ուրիշներից սովորելու: Եթե ուրիշները պրոֆեսոր են, ինքը ամենամեծ պրոֆեսորն է. «Թող սորվի ումեն օր կուզե, հմը առանց իրան հոր գիտութանը՝ էնոր ուսմունքն արժեք չունի»[2]: Եվ պատվիրում է՝ թող որդին քանդի իր քառասուն աղբյուրներից որ մեկը կամենա և սովորի աղբյուր կառուցելու գաղտնիքը, բայց նզովքի արժանանալու վտանգով անգամ ձեռք չտա միայն Հեղնար աղբյուրին, որի տակ գերեզման կա: Նրա համար Հեղնար աղբյուրը ուրիշ է... Ուստա Մկրտչի ցավն այն է, որ ներկա սերունդը աստվածավախ չէ. «Հիմի մարդն ստուգել կուզե ասպածային հրաշքը»: Հարսի առարկությանը, թե՝ «հրաշք չկա», ավելացնում է. «Հրաշքը կա ավտցողի համար,... հմը ավտցողը հրաշքը չի տեսնի: Կըսես տղիս, օր Հեղնար ախպուրի հրաշքը ոնչ թե չոր քարի կամ թաց հողի մեջ է, այլ իմ ժամանակվաս մարդոց հավատացյալ հոգու»[3]:

Այդ պահին ներս է մտնում որդին՝ Գալուստը, բայց հայրը արդեն մեռած էր: Ավարտվում է հրաշքների ժամանակը, սկսվում է նոր սերնդի դաժան ռեալիզմը: Հարսի հետ զրուցելիս կա մի շատ նուրբ պահ. Ուստա Մկրտիչը հարց-

1 Նույն տեղում, էջ 479:
2 Նույն տեղում, էջ 489:
3 Նույն տեղում, էջ 489:

նում է՝ ժամը քանիսն է, մահամերձը ժամ է հարցնում, և մինչ հարսը կգտներ ժամացույցը և կպատասխաներ, ինքը ավելացնում է՝ «իրեք բոպպե է պակաս...»[1]: Ինքը գիտեր, հարսն էլ հասկանում է խոսքի իմաստը:

Այս առասպելախառն պատմությամբ, ժողովրդական խոսքի իմաստուն ասույթներով, կյանքի իմաստով ու կյանքի մայրամուտով էլ ավարտվում է վիպակի առաջին մասը: Անցյալ է դառնում ուստա Մկրտչի հրաշքը:

Հոր մահից հետո Ձորի Բողազի բացվող առավոտին է նայում որդին՝ նա՛, ով պիտի գար, ով եկավ և որի անունն էր Գալուստ: Ե՛վ հերոսը, և՛ նրա Գալուստ անունը նոր ժամանակների մարդու գալուստն են հիշեցնում: Մ. Արմենը շատ հստակորեն դեմ-դիմաց է դնում հին ու նոր ուժերին, որովհետև որդու գաղափարական հիմքը ոչ թե ավանդույթի փոխարկված սերունդների հիշողությունն է, այլ՝ օրվա գաղափարախոսությունը: Իսկ սա նշանակում է, որ հայրն ու նրա ընկերները մարմնավորում էին Գյումրին, իսկ Գալուստը՝ Լենինականը:

***

Մինչև այստեղ վիպակի նախաբանն էր: Այսքանն ինքնին փակ ու ավարտուն մի ամբողջություն է, որ կարող է նաև շարունակվել: Իսկ եթե անգամ չշարունակվեր, այսքանը կմնար որպես շատ լավ, շատ հարուստ կոլորիտով գրված մի պատմվածք: Ընդ որում՝ կոլորիտը մի կողմից խոսքային է՝ Գյումրվա կենդանի բարբառով, մյուս կողմից՝ բնանկարային՝ Ձորի Բողազով, Արփաչայով, քաղաքային տեսարաններով:

Նախաբանին հաջորդում է ևս չորս գլուխ և վերջաբանը: Վիպակի կառուցվածքը համապատասխան է պատումի գեղարվեստական զարգացմանը:

Առաջին գլուխն սկսվում է քաղաքի բնակիչների նախահայրերի պատմությամբ, որոնք եկել էին Կարինից, Իզմիրից, Պոլսից և, ըստ իրենց ծննդավայրի, կառուցել իրենց թաղերը: Գյումրիի տները՝ սև տուֆից, կարմիր տուֆի զարդանախշերով դարսերով ու քիվերով: Քառակուսի կամ կամարաձև դռներ ու պատուհաններ՝ փայտը դրվագած, մետաղների մեջ ագուցած, որոնց փեղկերը դրսից ծածկվում էին խլափեղկերով: Փեղկերի մեջ փոքրիկ դռնակներ՝ երկաթե թակով, որոնք բացվում են դեպի բակ: Այս նկարագրությունը բացում է ոչ միայն հայկական, այլև հունական ու թուրքական թաղամասերի ներսի կյանքը: Քաղաքը տարածվում է դեպի զորամասերն ու բոստանները, իսկ կենտրոնը շուկան էր:

Այդ քաղաքում տարբեր ազգություններ խառնված էին իրար, որովհետև բոլորը մի ժողովուրդ էին՝ «գյումրեցի արհեստավորների ժողովուրդը»[2]: Բայց

1 Նույն տեղում, էջ 490:
2 Նույն տեղում, էջ 505:

տարբեր էին նրանց հավատն ու սովորությունները, ինչը երևում էր ոչ միայն կրոնական սահմանափակումների մեջ, այլև բաղնիք գնալիս:

Ահա բոստանների միջով անցնող ճանապարհով, չադրայով փաթաթված, թուրքական թաղ է գնում մի կին: Թեև քողարկված էր նա, բայց երևում էր, որ գեղեցիկ է, բայց նաև անհանգիստ: Ներքին տապից բռնկված՝ նա ցանկանում է աղբյուրից ջուր խմել, բայց երբ շրթունքները մոտեցնում է խողովակին՝ ջուրը կտրվում է: Տան տերը, կնոջը չտեսնելով, ջուրը շուռ էր տվել բոստանը ջրելու: Տանտեր հայը զմայլվում է կնոջ գեղեցկությամբ, նույն օրը հրավիրում է ուստա Մկրտչին, պատվիրում ուրիշ ջուր բերել բոստանի համար, որպեսզի խմելու ջուրը երբեք չկտրվի:

Չադրայով կինը թուրքերի թաղի աղբյուրից է ուզում ջուր խմել: Երբ շուրթերը մոտեցնում է ջրին, ճչում է և հարցնողներին բացատրում. «Եբ աչքս ընկավ ախպուրի վրա ուստի անվանը, ընձի էնպես թվաց, թե էնտից ընձի տղամարդ աշեց...»[1]: Այս կինը թուրքերի թաղում տուն էր վարձել՝ Հաբիբայի տունը, որն, ահա, տասը տարի է, ինչ մեկնել էր Մեքքա ու չէր վերադարձել: Այս նոր կինն էլ, մոտ 34-35 տարեկան, ներկայանում է Հաբիբա անունով: Նա անմատչելի էր հարևանների համար և ապրում էր որպես առեղծված՝ դրսի համար փակ, ներսից՝ իր կյանքով՝ շեն ու լի այդ տան մեջ: Այդ տանը կինը հանդիպում էր մի երիտասարդի: Դա սիրո տուն էր:

Գաղտնիքը բացվում է: Կինը ուստա Մկրտչի կողակից Հեղնարն է, երիտասարդը՝ Վարոսը: Սերը նրանց միավորել էր գաղտնիքի մեջ, և այս տունը նրանց սիրո տունն էր: Բայց սկզբից ևեթ կինը գիտեր, որ իրենց բռնած գործը արդար չէ, Աստծու սրտով չէ...:

Քաղաքն առասպելների մեջ է: Պատմությունները շատ են, որոնք առասպելի նման օղակում են սիրո տան առեղծվածը:

Խոշոր ընդգրկումով բացվում է Երանոսի կերպարը: Նրա ուշքն ու միտքը այն հրեղեն կինն էր, որը եկավ ու անցավ: Կիրակի օրերը սիրո օրեր էին այդ կնոջ համար, և Երանոսն սպասում էր տեսնելու նրան: Ահա գալիս է կինը: Երանոսը կտրում է նրա ճանապարհը, բայց կինը փակ գաղտնիքի նման անցնում է առաջ:

Ուստա Մկրտիչը ճանաչում էր Չորի Բողազի երկհարկանի քարե տանը ապրող ոսկերիչ Վաղինակի որդի Վարոսին, որն, ահա, գաղտնի սիրով կապված էր իր կնոջ հետ: Ուստան դեռ ոչինչ չգիտեր և խրատ է տալիս երիտասարդին, թե՝ հորդ վաստակած միջոցները քամուն մի տուր, արհեստ սովորիր: Մինչդեռ նա քամուն էր տալիս իր պատիվը:

Գրավիչ մի առեղծված, որ դեռևս գաղտնի ու չբացահայտված կապերն են, առաջ է տանում շարադրանքը:

---

1 Նույն տեղում, էջ 510:

Ուստա Մկրտիչն այցելում է Երանոսին, հյուրասիրությունը ևս ծես է: Երանոսն ամուսնացած է և ունի վեց տարեկան աղջիկ, իսկ ուստա Մկրտիչը ութ տարեկան տղա, առաջնեկը եթե ապրեր, կլիներ տասնութ տարեկան:

Երանոսը խմում է և պատմում հոգու ցավը: Ուստայի համար ձևախեղվում է նահապետական մարդու արդար նկարագիրը: Երանոսի զարմանքին պատասխանում է. «Հեռո՛ւ քաշվի, աննամուս: Թյո՛ւ... Ըպը տարի՞ք, գերդաստա՞նդ, նամո՞ւսդ... էս ի՞նչ էր լսեցի...»[1]: Երանոսի սերը դառնում է պատիժ: Ուստա Մկրտչից նա խելք է ուզում սովորել: Եվ խոստովանում է, որ կնոջ հետ ամուսնացել է ծնողների խոսքին չհակառակվելու համար, որին երբեք չի սիրել: Ուստան չգիտեր, որ Երանոսը սիրահարվել է թուրքի շորերով ծպտված իր կնոջը: Ուստայի վերջնական խորհուրդն է. «Սիրտըդ իստըկե էդ աղտից»[2]:

Մկրտիչը երջանիկ էր իր ընտանիքով, իր Հեղնարով: Եվ Երանոսին ծանր վիճակից հանելու համար հրավիրում է իր տուն՝ պատիվ տալու: Պատիվ՝ պատվի դիմաց:

Ուստա Մկրտիչը գնում է: Քիչ ավելի ուշ, այգում գործերն ավարտելուց հետո, նրա տան ճանապարհն է բռնում նաև Երանոսը: Երեկոյան մութի մեջ նա հանկարծ նկատում է չադրայով կնոջը, որը թաքնվում է նրա տեսադաշտից: Ճանապարհին ուստա Մկրտչի տան տեղն իմանալու համար հարցում է անում Վարոսին: Երանոսը հասնում է ուստա Մկրտչի տուն, և նրա առաջ սեղան է բացում... չադրայով կինը: Երանոսը ցնցվում է՝ անակնկալից կաթվածահար: Երանոսը հիշում է առասպելախառն պատմություններ, թե երբեմն սատանան գեղեցիկ թրքուհու կերպարանքով այցելում և խելքից հանում է մարդկանց: Հիմա նրա աչքի առջև այդ հրաշքն էր: Հավատա՞լ աչքի տեսածին, թե՞ ոչ: Կինը դրսի շորերով էր, նոր էր եկել սիրո տնից: Նա ամբողջովին արդուզարդի և գլխազարդի ոսկիների մեջ էր՝ իսկը գեղեցկության մարմնացում: Երանոսը մի պահ տատանվում է՝ սա ա՞յն կինն է, թե՞ նման է նրան: Ուստա Մկրտչի կինը ինչու՞ պիտի չադրայով երևար Թուրքի թաղում: Ի վերջո, նա հասկանում է, որ այդ կինը ոչ թե տեսիլք է, այլ՝ իրականություն. «Զարմանալի մի լույս սփռվել էր սենյակում, իսկ այդ լույսի մեջ կանգնել էր սքանչելի կինը»[3]: Կենացները, հյուրասիրությունը արդեն այս սքանչելիքի շարունակությունն են: Երանոսը խմում է Հեղնարի կենացը և ասում. «Ընտանիքի պատիվը սուրբ է... Հմը սերն էլ է սուրբ... Ո՞րն է ավելի սուրբ՝ Ասպած գիտե... Վով ընտանիքի պատվի համար իրան սերը սըպանե՝ իրան կսըպանե... Վով սիրու համար ընտանիքի պատիվը սըպանե՝ ընտանիքը կսըպանե... Տա Ասպած, օր ամեն տեղ ընտանիքն ու սերն

1 Նույն տեղում, էջ 535:
2 Նույն տեղում, էջ 537:
3 Նույն տեղում, էջ 548:

իրար բռնեն, իրար հետ էղնին...»[1]: Ուստա Մկրտիչը համաձայնվում է Երանոսի մտքերին: «Ընտանիքի պատիվն արհեստավորի պես է,-շարունակեց Երանոսը,- արհեստավորի ճակատի պես բաց է, սրտի պես ազնիվ, ձեռքի պես հալալ...»: Նա դեռևս շարունակում է. «Հմը սերը թուրքի կնկա պես է...: Թուրքի կնկա պես սերն էլ չադրի տակ է, օր ոնչ տեսնել կարելի է, ոնչ իմանալ...»[2]: Հեղնարն այս խոսքերից գունատվում է և լարվում: Իսկ Երանոսը ուստա Մկրտչի հավանությամբ շարունակում է. «Տղամարդն ընտանիքի սունն է, իսկ կնիկը՝ երդիկը: Սունն իրա գլխու վրա պիտի պահե երդիկը, հմը երդիկն էլ պիտի արգիլե, օր ոնչ թե մեննակ անձրևը չլցվե տունը, այլ նաև օտար աչքը ներս չաշե...»: Այս խոսքերի վրա նա ասում է. «Կենացդ, բաջի՛...»[3]:

Հեղնարը ճչում է հանցանքի մեջ բռնվածի պես, իսկ ուստան հանգստացնում է Երանոսին. «Անհանգիստ մի եղնի, Երանոս, կանցնի: Էս մէ ամիսմ է, օր Հեղնարս իսպես է՝ մեկ-մեկ կճչա ու գույնը կքցե... Վախեցած կերևնա...»[4]:

Երանոսը գիշերով դուրս է գալիս ուստա Մկրտչի տնից, իսկ առավոտյան նրան գտնում են իր այգում, թախտի վրա, դանակը սրտի մեջ: Քննությամբ հաստատվում է որպես ինքնասպանություն, բայց մահվան վերջնական պատասխանը հետո պիտի տրվեր:

Սա վիպակի ամենալարված տեսարաններից մեկն է. իրար են բախվում Երանոսի հոգում բռնկված սերը, ուստա Մկրտչի արդար ու բարձր կերպարը և Հեղնարի գաղտնիքը: «Կենացդ, բաջի...»,- խոսքը փարատումն է այն ներքին կասկածի, որ Երանոսն ուներ Հեղնարի հանդեպ, նրա համար արդեն պարզ էր, որ Հեղնարը չադրաների մեջ քողարկված կինն էր: Գյումրվա մի ամբողջ կենցաղ, հարաբերությունների ու ընտանեկան դրվածքի մի ամբողջ նկարագիր կա այս հատվածի մեջ, որը, ըստ էության, վիպակի գագաթնակետն է:

Հաբիբա-Հեղնարի գեղեցկության առասպելն արդեն հայտնի էր թաղի բնակիչներին, ինչը նաև նրա հանդեպ թաքնված խանդի զգացողություններ է արթնացնում: Մոլլայի հորդորով որոշում են կնոջը վռնդել, սիրեկանին՝ ծեծել:

Հեղնարին նկատում են նաև աղբյուր ջրի եկած թուրք կանայք, որոնց արդեն հայտնի էր Հաբիբայի գաղտնիքը: Մոլլայի կինը տան մուտքի մոտ կտրում է նրա ճանապարհը, ամոթանք տալիս: Հեղնարը թաքնվում է տանը: Նրա հետքով գալիս է ուստա Մկրտիչը, երևում է Վարոսը: Ուստա Մկրտիչը մտնում է տուն և տեսնում սենյակի մեջ ծնկաչոք աղոթող Հեղնարին: Տեսնելով ամուսնուն՝ նա նվաղում է և սրտի կաթվածից հանկարծամահ է լինում:

---

1 Նույն տեղում, էջ 551:
2 Նույն տեղում, էջ 552:
3 Նույն տեղում:
4 Նույն տեղում:

Լուրը տարածվում է քաղաքով մեկ: Հեղնարին ուստա Մկրտիչն այդ տան այգում էլ թաղում է: Քառասուն օր նա մնում է այդ տան մեջ և կառուցում հանգուցյալ կնոջ դամբարանը, որն այլ կերպ պետք է կոչվեր Հեղնար աղբյուր:

Շատ դիպուկ է Վարոսի մասին պատմող չորրորդ գլխի մուտքը. «Ոսկերիչ Վաղինակի տղան՝ Վարոսը, քանդեց օձիքի կոճակները և շարունակեց քայլել»[1]: Օձիքի կոճակները քանդելն ու շարունակ քայլելը պիտի դառնային նրա ճակատագիրը: Այդպես է, որովհետև նա բաց էր թողել իր կյանքի երասանները:

Վարոսը չի քողարկում եղածը, թեև կարող է քողարկել, քանի որ իր ինքնությունը բացահայտված չէր: Բայց սերը, Հեղնարի հիշատակը և իր ներքին նվիրումն ու ազնվությունը նրան տանում են իր ճակատագրի ետևից:

Հեղնարի մահվան օրը նրանց չկայացած հանդիպման օրն էր: Նա խույս տվեց հայացքներից և հեռացավ: Բայց հիմա հոգին կեղեքվում է՝ ո՞ւմ պատմել ցավը և կամ ինչո՞ւ պատմել:

Վարոսն ունի մեկ ինքնարդարացում. «Ո՞վ ասաց, թե սերը մեղք է, ո՞վ է դրել այդ օրենքը...»[2]:

Վարոսն այլևս ոչինչ չուներ Գյումրիում: Ամեն ինչ Հեղնարին էր հիշեցնում, բայց Հեղնարը չկար: Եվ նա որոշում է հեռանալ Գյումրիից և գնալ... Երուսաղեմ:

Հեղնարն ինչո՞ւ տրվեց Վարոսին, ինչո՞ւ պղծեց ամուսնական մահիճը: Սերն է,- կասի գրողը, որի զգացմունքային հեղեղը արդեն հորդել է սիրո տանը նրանց հանդիպումների ժամանակ: Սե՛րն է, որ նրան համարձակություն է տալիս խախտելու այդ ավանդապահ քաղաքի բարքերը և թեկուզ վախը սրտում, թեկուզ քողարկված, բայց ներքին վստահությամբ գնալ սիրո տուն:

Մինչ Վարոսն իր սիրո հիշողությունների մեջ էր՝ ուստա Մկրտիչը կառուցում է Հեղնար աղբյուրը: Քաղաքում տարածվում է Հեղնար աղբյուրի հրաշքի լուրը: Աղբյուրի գլխաքարին ուստա Մկրտիչը փորագրում է. «Ամմեն մե կնիկ իրան մարդու ախպուրն է, ուրիշ հեչ մեկը իրավունք չունի խմելու էնոր ջրեն»[3]: Բոլորի առջև աղբյուրի ջուրը կտրվում է, ով մոտենում է ծորակին՝ շվարում է հրաշքի վրա: Բոլորը Աստծուց ներողություն են խնդրում և մեղա կանչում:

Խելագարի ձայնով աղբյուրին է մոտենում Վարոսը: Մ. Արմենը ճշգրիտ է արձանագրել պահի հոգեբանական ընկալումը:

Հրաշալի է պատկերված Վարոսի հրապարակային ինքնաբացահայտումն ու զղջումը, իրեն մեղավոր է համարում Հեղնարի կորստյան համար. «Թողությո՛ւն էղնի քեզի, Հեղնա՛ր, օր իմ դժոխային սերս ընդունեցիր: Թողութ-

1 Նույն տեղում, էջ 580:
2 Նույն տեղում, էջ 585:
3 Նույն տեղում, էջ 599:

յուն էղնի քեզի, ազիզ, օր մե գիշերմ եկար ու մարդասպանութան գործն ընձի սորվեցուցիր»[1]:

Վարոսը ճանապարհ է բռնում դեպի Երուսաղեմ, իսկ Ուստա Մկրտիչը բոլորի աչքի առջև իջնում ու խմում է Հեղնար աղբյուրի ջուրը: Նրա հեռանալուց հետո այն ընդմիշտ պիտի ցամաքեր: Մնում է հրաշքի տպավորությունը և ուստա Մկրտչի հասցեին գյումրեցիների հոգում պահած օրհնանքը. «Պայծառ մնաս, ուստա Մկրտիչ...»:

Վարոսը իր խոսքի մեջ բացահայտեց նաև մի գաղտնիք. այդ նա էր Հեղնարի ցուցումով սպանել Երանոսին: Վերջինիս «Կենացդ, բաջի» խոսքը անհետևանք չէր մնացել:

Վիպակն ավարտվում է վերջաբանով: Գալուստը, հոր թաղումից հետո, այցելում է մոր գերեզմանին: Հակառակ հոր պատվիրանի և անգամ նզովքի, քանդում է հրաշագործված կառույցը և բացահայտում Հեղնար աղբյուրի հրաշքը: Հայրերն ու որդիները բաժանվում են իրարից. բաժանողը հայրերին ու որդիներին հակադրող նոր ժամանակներն են՝ իրենց հավատուրաց բարքերով: Եվ այս տեսակետից Գալուստի կերպարը դրական զգացմունքներ չի արթնացնում: Գալուստի այդ բացահայտումը նաև Հեղնար աղբյուրի հրաշքի մահն էր՝ Ուստա Մկրտչի կենսափիլիսոփայության ավարտը: Նա բաց է անում քսան տարի լռած աղբյուրի ակը, և ջուրը շատրվանում է: Հաջին չէր հեռացել: Զարմանքից մի քանի անգամ «Յա՛» է ասում և խոսքերի մեջ սեղմում ավերված կյանքի դառնությունը. «Ըսել է՝ սո՞ւտ էր ամեն ինչ... Յա՛... Ըպը կյանքս ընչի՞ անցավ...»[2]: Այս վերջին արտահայտությունը դառնում է ավարտվող վիպակի լեյտմոտիվը:

Ավելանում է ևս մի տեսարան: Երկու կառքով Արփաչայի ձորն են իջնում վարպետ Ավետիքը և նվագածուները: Կառքերից մեկը դատարկ էր: Յոթ վարպետներից մնացել էր միայն Ավետիքը: Նա իր բացակա ընկերների կենացն է խմում, և ինքն էլ ավարտում իր կյանքի ուղին, կառապաններին ասելով՝ «Քշե՛ք, էրթամ-անցնեմ վերջին կարմուրջի վրայեն...»[3]: Նա կառուցել էր իր տասներկուերորդ կամուրջը և երդումի համաձայն արդեն պիտի մեռներ:

Այս վերջին տեսարանը լրացնում է գաղտնիքը բացահայտած Հեղնար աղբյուրի պատկերներին, որովհետև դրանցով հեղինակն ուզում է ասել, որ Լենինական դարձած Գյումրի քաղաքի պատմության մեջ ավարտվում է կյանքի մի դարաշրջան՝ նահապետական վարք ու բարքի տեր վարպետների, ժողովրդական իմաստության, կյանքի ավանդական բարոյականության մի ժամանակ, երբ դեռ կար Աստծու վախը և հրաշքի գիտակցությունը:

---

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում, էջ 613:
3 Նույն տեղում, էջ 615: